



## Գ Ա Ղ Ո Ւ Թ Ա Հ Ա Յ Կ Յ Ա Ն Ք

### ԱՆԴՐ-ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

«Հայ մամուլ» շաբաթաթերթը (թ. 156) հաղորդում է.—

Անդր-Հորդանանի հայ գաղութը կբաղ-  
կանա շուրջ 270 ընտանիքներին, և դասա-  
վորված է հետևյալ կերպով.— Ամման՝ 135  
ընտանիք՝ շուրջ 1500 հոգի, Քերեք՝ 15, Սալթ՝  
12, Աճլուն՝ 4, Իրպիթ՝ 8, Մաամ՝ 4, Թաֆի-  
լի՝ 2, Մաֆրադ՝ 6, Մետեպե՝ 3, Էլֆոր՝ 2,  
Նաուր՝ 2:

Այս ավաններուն ու գյուղերուն մեծա-  
մասնությունը կկազմեն կիլիկեցիները: Ա-  
նոնք ընդհանրապես արհեստավորներ են,  
կան քիչ թիվով վաճառականներ և կառա-  
վարական պաշտոնյաներ:

Ունին եկեղեցի և դպրոց դանազան քա-  
ղաքներու մեջ, հովանիին ներքե Ս. Հակոբա

վանքին, որ տարեկան 368 ոսկի պյուտճե  
կտրամադրե: Մայրաքաղաքի դպրոցը կկոչ-  
վի Հեթումյան Ազգային Վարժարան և ունի  
մեկ հարյուր հիսուն երկսեռ աշակերտներ,  
վեց ուսուցիչներով և յոթը հոգի բաղկացած  
Տեղական Խորհրդով մը:

Այլ քաղաքներու մեջ գտնվող դպրոցներն  
յուրաքանչյուրը ունի տասը-տասնհինգ ա-  
շակերտ և մեկառավարովին մեկական ուսուցի-  
չով, պատասխանատվությանը տակ տեսուչ  
Հայր Սուրբին: Կիրակի օրերը տեղի կունենա  
պատարագ, մասնակցությամբ դպրոցական-  
ներու:

### ՂԱԶՎԻՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

«Եփրատ» քերթը (թ. 3331) հաղորդում է.—

1945-ին Պարսկաստանի Ղազվին քաղաքի  
հայության թիվն էր 1500 հոգի, որոնց մեկ  
մասին հայրենիք ներգաղթելով այժմ 150  
ընտանիք մնացած է, բաղկացած 850 շունչէ:

Անոնք ունին դպրոց, եկեղեցի և «Մշա-  
կույթ» ու «Կանանց բարեգործական» միու-  
թյուններ, ճոխ դրադարան և ընթերցարան:

### ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄ ՀԱՅԻԹԻՈՒՄ

«Պայքար» քերթը (թ. 12014) հաղորդում է.—

Հայթիի հանրապետության մայրաքա-  
ղաք Բորտ-Տե-Բրենսի մեջ կապրին 400-ի  
մոտ հայեր: Ավելի քան 15 տարի ի վեր  
հոն հաստատված է նաև Եփրատ Գոլեհի

շրջանավարտ խարբերդի Ձինաս Եղիայան,  
որ լեզուներու ուսուցման ճամարան մը բա-  
ցած է: Ի մեջ այլոց հոն կուսանին նաև հա-  
յիթիցի ծերակուտականներ:

### ԱՎԵՐԱԿ ԶԵՅԹՈՒՆԸ

«Պայքար» քերթում (թ. 12014) տպագրված է Մաշտոց Բանաստեղծականի «Ավերակ  
Զեյթունը» խորագիրը կրող հոդվածը, որ քերթում ենք ստորև.—

Սանճազի պարպումեն վերջ, Ճեպել-Մու-  
սայի Խըտըր-Պեկ գյուղին մեջ մնացող Տիգ-  
րան Քեռզկերյան, իբր թրքահայատակ և բա-  
վականին ճարպիկ հայ մը, ընկերակցելով  
տեղացի թուրքի մը հետ, մեծ թիվով մսացու

կենդանիներ ծախու առնելու համար ճամբա  
կելլե դեպի Ալպիսթան: Տիգրան, վերադար-  
ձին, իր ճամբուն վրա կհանդիպի Զեյթուն,  
ամբողջ վեց օր կմնա պաշտելի հայրենիքիս

մեջ և կըրջադաշի ամեն կողմերը ավերակ ծննդավայրիս:

Տիգրան որ քանի մը ամիս առաջ եղած է հայրենիքիս մեջ, այժմ ընտանիքովը փոխադրված է Շիրոյա հայաբնակ գյուղը. պատահամբ հանդիպեցավ ինծի և իմանալով զեյթունցի ըլլալս, արտասովալիք աչքերով բոլոր տեսածները պատմեց և ես հայրենիքիս կարոտը առնելու համար ժամերով մտիկ ըրի զինքը:

Տիգրանի պատմածին համաձայն, ներկայիս Զեյթունի մեջ կրնակին քսանհինգ տուն թուրքեր:

Այժմու բնիկները հայրենիքիս արեւելյան և արեւմտյան բարձունքներուն վրա շինած են աղյուսե խեղճով հյուսակներ, մշակած են միայն ափաշափ տեղեր, իսկ մնացած մասերը ձգած են իրենց վիճակին մեջ:

Հայրենիքիս խնամյալ, համբավավոր այգիները, պտղատու պարտեզներու բոլոր ծառերը չորցած են, դաշտերը ծածկված են փուշերով և տատասկներով և հոն բույն դրած են թունավոր օձեր ու վայրի կենդանիներ:

Զեյթունի Ս. Աստվածածնա Մայր եկեղեցին, որը կգտնվի քաղաքին մեջտեղը, ավերակույտի մը վերածված է, մնացած է մեկ սենյակ միայն և կառավարովքովը այդ սենյակը վերածած է պահակատունի:

Քաղաքիս արդիական բաղնիքը, որ 1904-ին շինվեցավ Սահակ Բ կաթողիկոսի տրամադրութեան տակ գտնված ներջան կրտակադրամով, կանգուն վիճակի մեջ է, բայց անգործածելի, ջուրի խողովակներու փխնալուն պատճառով:

Տիգրան բարձրանալով բլուրը, հանգչած է մեծ թուփի ծառին տակ ու երկյուղածութեամբ համբուրած է այդ ծառին քովը գտնվող ընդարձակ գերեզմանատան խաչքարերը, ուրտեղ կհանգչին հայրենիքիս հերոսները. այդ խաղաղ հանգստարանն ևս վերածված է վայրի թուփերու անտառի մը, շիրմաքարերը անտեսանելի ըլլալու աստի-

ճանին հասած, և պիղծ ձեռքեր կատարած են իրենց պղծովքովը մուրճի հարվածներով փշրելով տապանաքարերը:

Ս. Աստվածածնա պատմական վանքը ավերակի վերածված է, ցամքած են անոր աղբուրները, մարդ մարդասանք չկա, և կտեսնես միայն վանքին մեծ կալին առջև հասակ նետած ընկուզենիի վիթխարի ծառը ճղակրտոր վիճակի մեջ, իբր պահակ մը սգավոր:

Վանքեն անդին, Տիգրան կերթա Փաթենց սառնորակ աղբուրը, սոսայց պզտիկ անտառակը: Այդ ձյունասպիտակ ծառերու հովանիին տակ, որ այն երանելի օրերուն հովիվները իրենց սրնգի անուշ և մեղանուշ ձայնով գառներն ու ուլիկները ակնաղբուրին քովիկը կառաջնորդեին և հայրենիքիս պարմանուհիները կախօրաններու վրա նըստած Զեյթունի փառքը կերգեին, ամայացած են:

Տիգրան գլխիկոր և սգավոր զառիվարին վար իջնելով կհասնի հայրենիքիս չորս ճամբային վրա իբր պահակ կանգուն մնացած և թոններով ծանրութուն ունեցող քարերուն քովիկը և կտեսնես, որ անոնց վրա ամրացված երկաթե մեծ խաչերը ջարդ ու փշուր ըրած են անհավատները ու անոնց հետքն անգամ մնացած չէ:

Տիգրան կայցելե նաև Նահատակաց աղբուրը, համբավավոր Շուգրի կամուրջը, Ակ-աղբուրը, և իբր ուրվական քանի մը օր ևս կմնա ավերակ հայրենիքիս մեջ ու անկից կանցնի Մարաշ: Այս քաղաքին մեջ ևս ոչ մեկ հայու ձայն կլսես, և տրտամ, տրխուր կհեռանա:

Ներկայիս հայրենիքիս Զեյթունի մեջ լըռած են զանգակները, միայն առավոտյան դեմ կլսվի մուռաղինին ձայնը խեղճ ու կրակ մզկիթի մը աշտարակին ծայրեն, և անոր ձայնը կերթա կիսառնկի ավերակ հայրենիքիս մեջ բույն դրած բուրբուղի վրա վուններուն: Այսքան...:

## ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՅՈՒՐՄԵՅԱՆԻ „ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔԻ“ ԱՇԽԱՏՈՒՅՑՈՒՆԸ

Մայր Աթոռում ստացվել է Նվրոպայի թեմի Հայրապետական Պատվիրակ Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանի մի կարևոր աշխատությունը — «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Վանքի», Ա հատոր: Երոսաղեմի հայերեն ձեռագրերի Մայր ցուցակի հրատարակման անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում և պետք է ողջունել Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանի նախաձեռնությունն ու

այս հատորի հրապարակ գալը: Ցուցակը կազմված է խնամքով և հետաքրքիր ձևով: Ա հատորում ընդգրկված է 164 ձեռագիր, որոնց նկարագրությունները զբաղեցնում են 361 մեծադիր էջեր, երկուական սյունակից բաղկացած: Սկզբում տրված է ամեն մի ձեռագրի խորագիրը, ապա նրա տակ, ձախ սյունակի վեղբը ցույց է տրված ձեռագրի ինչ համարի տակ գրանցված լինելը կամ թիվը, իսկ վերջինիս դեմը, աջ սյունակի